ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2015 թվականի թիվ 190 - Ա

ՆԱՐԵԿ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի դ/ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի՝ «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի /ծածկագիր՝ 70-2.1-6/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015թ.հոկտեմբերի 7-ի N 5 որոշումը և Նարեկ Վանեսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Նարեկ Տիտանի Վանեսյանին 2015 թվականի հոկտեմբերի 12-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի /ծածկագիր՝70-2.1-6/ թափուր պաշտոնում:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի (4.70) կիրառմամբ՝ 310858 /երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ/ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 12
ք.Իջևան